ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր 08/04/2025

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Հմայակ Խաչատրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նարինե Խաչատրյան, Ռիմա Մանուկյան, Գարիկ Գեվորգյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բադալյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի 2025 թվականի ապրիլի 8-ի թիվ 4 հերթական նիստի օրակարգը՝
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի առաջին եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների

գործընթացի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին.
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին.
4) Համայնքի ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
5) Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները և տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
7) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
8) Համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
9) Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին
10) Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախնական համաձայնություն տալու մասին.
11) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն կատարելու համաձայնություն տալու մասին.
12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին.
13) Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 12-ի N 36 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի առաջին եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39)*

ԼՍԵՑԻՆ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

1. Հաստատել Ծաղկաձոր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքների գործընթացի իրականացման ժամանակացույցը ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը՝

Վաղաժամկետ դադարեցնել Ծաղկաձոր համայնքի ավագանու անդամներ՝ Հմայակ Խաչատրյանի, Արթուր Մելոյանի, Յուրա Մանուկյանի, Գրիգոր Ղարիբյանի և Ռուբեն Սաֆարյանի լիազորությունները:

Կողմ-0 Դեմ-9 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42)*

ԼՍԵՑԻՆ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և «Գնումների մասին » օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով

1. Տալ համաձայնություն ներքոհիշյալ աշխատանքները և դրանց տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունները անցկացնել հրատապ բաց մրցույթի ընթացակարգով.

1) Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի Խաչատուր Կեչառեցի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ.

2) Ծաղկաձոր համայնքի Արտավազ- Փյունիկ բնակավայրերի արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ.

3) Ծաղկաձոր համայնքի Հանքավան բնակավայրի 3-րդ փողոցի, 1-ին և 3-րդ նրբանցքների կապիտալ վերանորոգման ՝ ասֆալտապատման, Մարմարիկ բնակավայրի 2-րդ փողոցի, 3-րդ փողոց 2րդ նրբանցքի և 5-րդ, 6-րդ փողոցների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման և ջրահեռացման համակարգի աշխատանքներ.

4) Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 1-ին, 2-րդ, 8-րդ և 10-րդ փողոցների շարունակելի հատվածների և 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ ր 11-րդ հիմնանորոգման աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին 2 խումբ 2 դաս 1 (Քաղաքացիական պաշտպանություն) հոդված «4269» (Հատուկ նպատակային այլ նյութեր) «1000,0» թիվը փոխարինել «2000.0» թվով:
2) Բաժին 2 խումբ 2 դաս 1 (Քաղաքացիական պաշտպանություն) հոդված «5511» (Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և (կամ) կապիտալ ակտիվի ձեռքբերում) «246,5» թիվը փոխարինել «8000,0» թվով:
3) Բաժին 9 խումբ 2 դաս 2 (Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն) հոդված «5113» (Շենքերի և շինությունների կառուցում) «10000,0» թիվը փոխարինել «2246,5» թվով:
4) Բաժին 11 խումբ 1 դաս 1 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «217815,5» թիվը փոխարինել «216815,5» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի մարտի N 14 եզրակացությունը և Էդվարդ Վարազդատի Տիգրանյանի դիմումը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Աղավնաձոր գյուղ վարչական տարածքում գտնվող Էդվարդ Վարազդատի Տիգրանյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության արոտավայր՝ նպատակային և գործառնական նշանակության 0,20 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 07-010-0150-0048) հողամասը փոփոխել հատուկ պահպանվող տարածքների հողեր , հանգստի համար նախատեսված հողեր՝ նպատակային և գործառնական նշանակության :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 1,19 հա/ վկայական 1450493/ մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Մեղրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, 4,46 հա/ վկայական 1450494/ մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Մարմարիկ 4-րդ փողոց 47 հասցեում գտնվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,3400 հա մակերեսով / ծածկագիր 07-044-0026-0014/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Խ. Կեցառեցու փողոց 48/3 հասցեում գտնվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,00063 հա մակերեսով / ծածկագիր 07-005-0009-0106/ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց 8/4 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի

համար նախատեսված 0,05939 հա մակերեսով / ծածկագիր 07-005-0002-0001 հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր գյուղ Գոռգոչ 2-րդ փողոց 31/1 հասցեում գտնվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման 0,10978 հա մակերեսով / ծածկագիր 07-045-0102-0130 հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի , հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 26-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

1. Տալ նախնական համաձայնություն Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր , Գլխավոր մարզահամալիր թաղամաս 19/1 հողամաս հասցեում գտնվող, «ԷԿՈ ԲԻԼ ԴԻՆԳ » սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0,36 հա մակերեսով (ծածկագիր՝ 07-005-0026-0885) բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողամասում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-3 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42 կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով 2025 թվականի ապրիլի 02-ին կայացած հանրային լսումների արձանագրությունը

1. Տալ նախնական համաձայնություն Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր , Տանձաղբյուրի փողոց 1 հողամաս հասցեում գտնվող՝ Արսեն Աշոտի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,6 հա մակերեսով / ծածկագիր՝ 07-005-0024-0030 / բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողամասում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-3 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ -5 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով «Էդիֆայս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի մարտի 20-ի գրությունը՝

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք -5 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի կազմում ներառված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերում փոփոխություն նախաձեռնելու համար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-4 Դեմ-7 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի, պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 2025 թվականի ապրիլի 04-ի N ԱՎ/26.2/10575-2025 գրությունը.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50)*

ԼՍԵՑԻՆ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 36 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահաջներով

1.Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 12-ի «Վարձակալության պայմանագիրը լուծելու մասին» N36 որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.
1) Լուծել «Ծաղկաձոր Սերվիս » փակ բաժնետիրական ընկերության հետ 2005 թվականի օգոստոսի 11-ին կնքված՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի հյուսիս- արևելյան լանջի տարածքում գտնվող 0.16 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51)*

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՍՆԻ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԵՏԱՐԱՆ
ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ
TSAGHKADZOR REGION MUNICIPALITY
ԼԱՌՆԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԵՏԱՐԱՆ
РА КОТАЙКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ
03027029

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղալյանը